


ԲԱԺԱՆՈՒՄ ԱԳՐՈՒԹԻՒՆ  
Պուշկարիոյ համար  
Տարեկան 12 Ժր.  
Վեցամսեայ 6 »  
Արսասահմանի հա-  
մար Տարեկան 15 »  
Վեցամսեայ 8 »  
Ամերիկայի համար  
Տարեկան 3 Ժր.  
Վեցամսեայ 1.50 »  
ԿԱՆԻՔԻ ՎՃԱՐՆԵԼԻ  
Մանուգրական տպարան  
Երեսին համար 40 սանթիմ  
Է. իսկ վերջին երեսին հա-  
մար 20 սանթիմ է. երեսին  
սակի սեղաններու համար  
20 Օլ. գեղջ կրչայ :

Վառնայի համար ձեռքի 10 սանթիմ



### ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԵՐ ՀՐԱՏԱՐԱԿՆՈՒԹԻ ՉՈՐԵՔԵՆԱԲԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՈՐԵՐԸ

Համակ եւ դրամ դրկի  
Խմբագրութեանս հասցիքի  
—  
Ред- за вѣстникъ  
Vienne ԿՄՄ  
Varna  
Redaction du journal  
«Charjoum»  
Varna (Bulgarie)  
Իրոսթիմիս եւ չին տրուի  
Արսասահմանի ձեռքի  
( 20 ՍԱՆԹԻՄ )  
Պուշկարիոյ համար ձեռքի  
( 15 ՍԱՆԹԻՄ )

Սերգէն «Շարժում»-ի եր-  
րորդ սարձը շնորհ լրացուեալ, ու  
տակաւ ին արտասահմանի մաս մը  
բաժանորդներ իրենց բաժնե-  
գինները չեն զրկած, մանաւանդ  
ամերիկացի բաժանորդները :  
Ուստի շարժումը արագապիկ թերթ  
զրկելէ ետքը, երբ դեռ կը  
խնայենք, արդէն կը կարծենք  
թէ պէտք եղածէն աւելի ազ-  
նուութեամբ վարուած կըլլանք  
մեր բաժանորդներուն հետ, և  
կը փափագինք որ, բաժանորդ-  
ներն ալ շարաշար չի գործածեն  
զայն :

Խմբագրութիւն

### Ս. ԳԱՐԻԷԼԵԱՆ

Դիւանոս գործակալ

ՊՈՒԼԿԱՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԵՐԱՇ-  
ԽՍԻՈՐԵԱՆ ԱՕՅԻՍ ՔԱՂԱՔԻ ՎԻՃԱ-  
ԿԱԶԱՆՈՒԹԵԱՆ ՏՈՄՍԵՐՈՒՆ :

Տոմսակ գնել փափագողները կրնան  
իրեն գիմել  
Չար-Պորիս փողոց  
Վառնա  
8-25

### ՄԳԼՈՏԱԾՆԵՐԸ

Ու չի ուշով կարգացի թաւրէժի  
Աղջ. վարժարանին Տնօրէն Տ.  
Ռաշմաճեանի քննութեան և  
թուանշաններու վնասակարու-  
թիւնը շնորհ յօդուածը, որ  
կաւարտէր շարժումը որուան թիւին  
մէջ : Յայտնած գաղափարներուն  
և պարզած տեսութեան համա-  
կարծիք եմ մեծ մասամբ. իսկ  
տարակարծիք մէկ քանի կէտե-  
րու մէջ՝ որոնց մասին անգրա-  
դաւանաթերեւս քիչ օրէն :

Օգտաշատ գրութեան վերջա-  
ւորութիւնը կը կազմէր ամենէն  
ուշագրաւ մասը, ուր շնչուած  
էին որոշ գծերով գաստիարակու-  
թեան և կրթութեան գործերը,  
ներկայ ժամանակիս մանկավարժա-  
կան գրութեան համաձայն, բաղ-

ձացեալ վիճակի մը մէջ գնելու և  
զայն իսկապէս օգտակար հան-  
դիսացնելու կրկին տեսակէտնե-  
րով :

Ահա՛ թէ ի՞նչ կը պահանջէ  
Ռաշմաճեան ուսուցիչէ մը, որ  
կոչուած է մեր ապագայ սերունդը  
օժանդ տոճմային լուրջ կրթու-  
թեամբ : Ուսուցիչը պէտք է կո-  
չուում ունենայ, ծանօթ ըլլայ ման-  
կավարժութեան և անոր օժանդակ  
գիտութիւններուն, ունենայ ե-  
ռանդ աշխատելու և փափաք  
ինքնազարգանալու :

Այո՛ Տիար Ռաշմաճեան, եթէ  
վարժարան մը վարող ուսուցչա-  
կան մարմինը կազմուած ըլլայ  
առանց բացառութեան այս ան-  
կութիւններով ու հանգամանք-  
ներով, այն ատեն ընտել երբէք  
պէտքը չի մնար ո՛չ թուանշաննե-  
րու, ո՛չ պատիժի ու վարձատրու-  
թեան վնասակար գրութեան կի-  
րարկումին :

Ի՞նչ կարծէ սակայն մեքենայ  
մը, որուն մէկ քանի մասերը  
հինցած, կեղտոտած ու մզլոտած  
են բոլորովին : Որքան ալ նոր  
ըլլայ մեքենան, չի պիտի զաղ-  
րի, գործելու պահուն, ունենա-  
լէ իր սայթաքումները, իր կա-  
ղացումները և անկարող պիտի  
դտնուի պահանջուած օգուտը  
արտադրել լիովին : Պէտք է և  
բացարձակօրէն պէտք է այդ  
մզլոտած ու հինցած մասերը  
մէջտեղէն վերցնել միանգամ  
ընդ միշտ և անոնց տեղ նորերը  
վերադրել մեքենան իսկապէս ար-  
գիւնաւորով վիճակի մը մէջ կա-  
րենալ գնելու համար :

Ուսուցչական խումբն ալ յար  
և նման է այդ արգիւնաւորող  
մեքենային :

Պահանջելի բարեմասնութիւն-  
ներով օժտուած նորը կաշխատի,  
կը տքնի, իր մտածումի առար-  
կան ըրած է գիշեր ցորեկ իր  
սաները, անոնց մէջ մի քայլա-  
փոխին կը հետեւի, անոնց ցա-  
ւին ցաւակից է, ուրախութեան  
ուրախակից, չար հակումներուն  
խափանարար, բարի տրամա-  
գրութեանց խրախուսիչ, համե-  
րաշխութիւնը տիրած է բաւին

առնալայն առումով ուսանողին  
և ուսուցչին միջեւ. կամակոր  
ընդլուծմանու յաջորդած է գի-  
տակից հնազանդութիւնը. քաղց-  
րիկ ու պայծառ միժնոյրտ մը,  
ուր անխնայ ծեծ ու փետին տեղ  
կայ լոյս ժայտը և խանդակաթ  
ու գործակից սէրը, խրատեցու-  
ցիչ յանդիմանութեանց ու մա-  
նուկին անհատականութիւնը իս-  
թարող ստգտանքի փոխան՝ մեղ-  
րածորան բաւեր ու շինէ խօս-  
քեր : Իսկ անդին մզլոտածները  
ու ժգնապէս կառչած մնացած են  
իրենց ին պատուելիական ան-  
գրչրհեղեղեան գաղափարնե-  
րուն, պլլուած՝ իրենց quasi կըր-  
թիչ գաւազանին, թուանշաննե-  
րուն, և չեն ուզեր մաղի չափ  
չեղիլ անոնցմէ, կը խորշին նո-  
րութենէ, կը վախնան լոյսէ,  
ինչպէս գիշերային լու՛ն՝ արեւուն  
լինսատու շողերէն : Ու թե՛րեւս  
առանց խղճահարութեան իրենց  
արդարացումը կը գտնեն, «այս-  
պէս տեսեր եմ և այսպէս ալ պի-  
տի ել թամոյի յաւիտենական յան-  
կերգին մէջ :

Յանցանքը որո՞ւ է հիմա, ըն-  
թերցող, այդ անդր՝ ինչպիսի  
խափած, մզլոտած պատուելինե-  
րուն, թէ՛ պաշտօնական մար-  
միններուն, որոնք «խաթեր»  
համար բերեց տնկեցուցեր են  
այդ յաւիտենականօրէն սղորմե-  
լիները վարժարաններուն մէջ և  
անոնց յանձներ են իրենց սրտա-  
հատար վակներուն գաստիարա-  
կութեան և կրթութեան է՛ն կա-  
րելու ու է՛ն վսեմ գործը :

Արտասահմանի հայաբնակ քա-  
ղաքներու բոլոր պաշտօնական  
մարմինները պէտք է որ ուսուց-  
չական խումբը ընտրած ատեն  
այդ ազգակործան, աւերիչ,  
քանդիչ «խաթեր» մէկ կողմ  
գնեն, խղճմտօրէն և անաշառօ-  
րէն կատարեն իրենց ընտրու-  
թիւնները, և յանձնեն այսպս  
սերունդը կրթելու և գաստիա-  
րակելու էն կարելու գործը արգի  
մանկավարժութեան պահանջում-  
ները լիովին գոհացնելու կարող  
ուսուցիչներու, եթէ կուզեն ա-  
պագայ ահաւոր պատասխանա-  
տուութենէ զերծ մնալ, վասն զի

ժամանակը անդառնալի է, բաց-  
ուած վէրքը՝ անբուժելի և վնասը՝  
բոլորովին անդարձանելի :

Աւելցէ՛ք այդ մզլոտածները  
վարժարաններուն մէջէն, դուրս  
նետեցէք այդ déplacés-ները, ա՛յ  
եւս անոնք գործ չունին զպրո-  
ցին մէջ, թող երթան ուրիշ  
վայրեր և ուրիշ գործ փնտնեն  
իրենց կաշին ապրեցնելու հա-  
մար : Մե՛զք է մեր վակներուն :  
ՀՈՒՐ-ԱՌՕ

### ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Կ. ՊՈԼԻՍ. 16 Փետրուար

Հրէաները մէկ Ղազարու մը ու-  
նեցան. մեռաւ և նորէն յարեաւ,  
իսկ թուրքիոյ հայ երիտասար-  
դութիւնը հազար Ղազարունե-  
րունեցաւ ու ունի : Դուք ինք-  
նին դատեցէք. Ղազարու չէ՞  
թ. մը որ ամիս մը ծակը կեր-  
թայ, Անոր գէժ կան խոշոր մե-  
ղադրանքներ... պիտի աք-  
սորուի, ցկեանս պիտի բանտար-  
կուի, կախուի, կը մտածենք ա-  
մէնքս... բայց ահա կը հասնի  
թուրքիոյ փրկարար յիսուսը,  
10—20 օսկին՝ և մեռած Ղազա-  
րունիս, օրինակ թ. յարութիւն  
կառնէ :

Թ. օրինակ մըն էր, ընթեր-  
ցող, ատանկ են կիրակոսն ու  
Մարկոսը, ատանկ են Սեզրոս  
ու Թորոսը. ատանկ ալ եզայ ես,  
մեղաւորս, այս վերջին երեք  
շարժը. Ղազարու էի. և յար-  
եայ : Ալ հերթք է չեմ ուզեր  
վրան բաց գրել :

Ան ալ չէի գրեր բայց պէտք  
է անձս պաշտպանել—այս երեք  
շարժը չի գրելուս համար :  
Միայն ի սէր «Շարժում» չելլաք  
դուք ալ խել մը հա—ուզեղնե-  
րու պէս սա մէկ պատճառաբա-  
նութիւնս իբր ինքնազովութիւն  
նկատէք... Դուրս եկած է կը  
զգուշանամ նախօրք :

Ու ընմն ընթերցող, գրելիքս  
21 օրուան անցուցարձ են. մե-

զաւոր չեմ, եթէ գրածներէս շատ արգէն ձեզի ծանօթ ըլլայ այլ աղբիւրներէ :

Ասկէ երկու շաբաթ առաջ Համբար և Շահի հպատակներուն համար խիստ բնական և սովորական դէպք մը եկաւ պղտորելու Պոլսոյ «Հայ-Լայֆ»-ի սիրան ու բաժնի բարոյականը :

Պոլսոյ կողմը Չարմաքճըրլար, հօքուշին քովերը կայ պարտից բուն Եղոյ Զինճիրի խանը : Հոն ալ կը կենայ սովորական պարտիկ մը : Թուրք ու պարսիկ կը նմանին սառանային երկու զաւակներուն Սլիկին ու Պլիկին, «նիլէթ Սլիկին ալ, Պլիկին ալ» կըսէ ժողովրդական իմաստութիւնը :

Ատ խանին քովերը, հայ վարպետի մը քով գեղեցիկ հայ տղայ մը հազիւ 14 տարեկան՝ աշակերտութիւն կընէր անցեալ տարի : Եւ անցեալ տարի յունիստի «չօճուխը» կորաւ, չի նայելով թուրք ոստիկանութեան, ծնողքներու և ծանօթներու ամէն ջանքերուն : Խուզարկութիւններուն ու արտասահման քաշուած հեռագիրներուն :

Կ'որ տարի մը բոլորեցաւ և ահա երեսնան լոյս աշխարհ և կաւ—կորացած մէջքով, այլանդակուած կերպարանքով և սէրսէմ վիճակով մը : Զինճիրի խանին պարսիկ դաճառականը տարբեր ներսի խորախոր սենեակներէն մին բանտարկեր էր և պատէն կախուած զանակներով ու ատրճանակներով դասցնելով անձայն պահեր էր : Յերկը յամազ կընէ եզեր, շունը Մահմէտին ու Ալլահին, իսկ երեկոն կաղօթէ եզեր արեւելիի համբարտական Ալլահին—Սողոմական, հակաբնական հրէշաւոր զուարճութիւն : Որթ, հրէշ, ճիւղ... Եւ այս կ'որ տարի մը, ամէն գիշեր, երբեմն ալ օրական քանի մը սնգամ, ինչպէս գժբազդ զո-

հը խոստովանեցաւ Կալաթա-Սէրայի մէջ, փաշայի առաջ :

Բանտ սենեկին մէջ պատուհան մը կայ, եզեր շարժական երկաթներով : Պարսիկը ամէն օր խնամքով չուխտ երկաթները կը կարմրցնէ ու կը կզպէ եզեր, իսկ այդ փախած օրը մոռցեր է մէկը կզպել : Տղան հաներ է զայն ու տանիքէ տանիք հասեր է հայ ոսկերիչներու շարքը ու պոռպոցեր օգնութիւն է կանչեր : Կէս օրի առեկներն էր, տղան բերին Թաղա Պաշի ծնողներուն տունը : Բայց տարի մը մայրը փնտրելով իր զաւակը՝ մեռած էր արդէն...

Իսկոյն հերոս պարսիկը ոստիկանութեան տարուեցաւ : Բայց թերեւս արեւելքի այլահ ոսկին նորէն փրկէ զայն : Թուրքիոյ մէջ անհնար ոչինչ կայ :

Թուրքիոյ մէջ սրտանց և պարզերես ուրախանալն ալ անհնար է : Թուրք լրագրիչները սրտի մեծ հրճուանքով հետեւեալ անհասկանալի նօթան հրատարակեցին. «Իշխանի կզպի մասին ըրած դիմումները անարդիւնք մնացին և իրերու վիճակը փոփոխութեան չի պիտի ենթարկուի» : Եկուր ու բան հասկցիր : «Իշխան» Բրէնսթօրմն է, «կըզպի» կըսուէն, «ըրած դիմումներն» ալ միջազգային պահակազօրքերուն հեռանալուն համար եղած դիմումներն են... Շանեբես երկիր թուրքիա, ուր պարզ հրճուանքն ալ արդիւնուած է :

Նոյն ապուշ թերթերը, գլուխներին «Սապահ» ու «Գաթաֆ» հրատարակեցին խել մը «որոշումներ» խեղդատակներու որոշումներ, Եւրոպա փախած պաշտօնեաներու համար : մէկը բանտարկութեան

մէկալը մահուան, երրորդը արտարանքի են գառապարտուած : Իսմայիլ Գէմալ պէյ և այլ շատ անձեր հոտ են, առ կապական վճիռներու մէջ միայն չէ Համբարի փեսան, Տամատ Մահմաթ... Թօհաֆ բան, հոն է և յայտնի «Աֆերիստ» Պօլոս Բանթարճեան, Ձէքի պէյը, երբեմն հոս, քննիչ գաղղիներէն, անգլիներէն թերթերու : Ու առ Յիւրիսի, Ժընէյի և Ալէքսանտրիոյ փողոցներու քարերը համրող թափառաշրջիկ ձեռնածոն դատապարտուած է բանտարկութեան :

ԲԱԺ

ԷՍԿԻ-ՉԱՀՐԱ. 7 ՓԵՏՐՈՍ

Էսկի-Չահրա (Սթարա-Չակօրա) Արեւելեան Ռումէլիի նշանաւոր քաղաքներէն մին է, վերջին Ռուս-Թրքական պատերազմի ժամանակ բոլորովին հրոյ ճարակ եղած է, և հակառակ իր անուան բոլորովին նոր շինուած է, յայն պողոտաներով, մաքուր փողոցներով և գեղեցիկ շէնքերով : Քաղաքը կը բաղկանայ 5-6 հազար տունէ, որոնց մեծամասնութիւնը պուլկար է. կը գըտնուին նաեւ թուրքեր և հրէաներ ու փոքր մաս մը՝ 12 ընտանիքի չափ հայեր : Պոլսոյ վերջին գաղթականութեան միջոցին հոս եւս եկած են գաղթական հայեր, որոնց ոմանց անպատուաբեր ընթացքը բաւական պաղեցուցած է պուլկարներու սէրն ու համակրութիւնը զէպի հայերը : Այժմ եւս կան անոնց մնացորդներէն, որոնք գէշ աղէկ զբաղում մը ունին և պատուաւոր կերպով կապրին : Քաղաքիս հայ գաղութը նիւթական միջակ գիրք մը ունի. և ամէն անգամ երբ պէտքը զգացուած է, ետ չէ մնացած օգնելու իրեն ազգակիցներուն : Հոս ունինք հին գերեզմանաքարեր, որոնք

ներ, իսկ զարհուրած գիւղացիները բերանարաց հետաքրքրութեամբ կը դիտէին թրջուած քաջերը :

Պանգոլի առկէ շարուած էին կիներ. աղջիկներ ու երեխաներ, բոլորն ալ պատուած զգեստներով, զոգոզալով ու ցրտի սաստկութենէն կարմրած : Աստք կը դիմաւորէին ու ճամբու կը գնէին վէթրէնի քաջերը, որոնք թուրք սահմանադիւնէն—Հարմանլըն—բանակին հետ կուգային ու հապճէպով Սօֆիա կը սայնային, սնկից ալ պատերազմի դաշտը, որ շատ մօտ էր...

— Ահա կ'երկիրի տղան, էյ Տիլէթօ, բարո՛վ կը թաս :

— Տեսա՛ր, Բանիէյն ալ կանցնի, — Սա ալ նէտէլքօին տղան, էյ Իվան, մայրդ հոս է :

Ու փութով ծաղկեայ փունջեր կը տրուէին, աղի արցունքներ սյտեղէն կը հոսէին, խօսքերը կիսաա կարտասանուէին. իսկ զինուորները կանցնէին անդադար :

պատկանելի հնութիւն մը կը կազմեն, և զորս պուլկարները իրենց նոր եկեղեցին շինելու համար ապագայութեան են : Քարերը կտոր փշուր եղած են, տառերը եղծուած և անընթեռնելի են : Թէեւ հետաքրքրուեցանք քիչ մը տեղեկութիւններ առնել, բայց չի կարողացանք որոշ և ստոյգ ծանօթութիւն մը ստանալ : Տեղացի հայեր ոչինչ չեն գիտեր, ի լրոյ կը պատմեն թէ հին ժամանակներն 200—300 հայ բնատանիք կան եզեր իրենց առանձին եկեղեցիով, բայց այժմ հետքն անգամ չէ մնացած : Տապանաքարերու մեծ մասը հրէաները յափշտակեր են և փոխադրեր են իրենց գերեզմանատունը :

Տեղացի հայ գաղթականութիւնը որչափ որ առանց եկեղեցիի մնացած է, բայց դարձեալ չէ մոռցած իր ազգն ու միշտ փափաքած է վառ պահել իր մէջ հայրենիքի յիշատակներն : Իր մայրենի լեզուն կորսնցնելով հանդերձ, սրովհետեւ թրքախօս է, այժմ կը ջանայ իր զատկաց ուսացնել : Այս նպատակաւ քանի մը օր առաջ տեղի ունեցաւ բնագահանուր ժողով մը, և հայ մանուկներու իրենց մայրենի լեզուն ուսացնելու համար, որոշուեցաւ մանկապարտէզ մը բանալ : որու համար ալ կազմուեցաւ ընկերութիւն մը «Կարոցասիրաց» անուամբ : Ժողովին նեկայ էր նաև Սլիվէնի նորընծան՝ արժանապատիւ Վալինակ հայրը, որ յուզեալ և ազգու շեշտով խօսեցաւ ազգային կեանքէն և բացատրեց մայրենի լեզուի և ուսման կարևորութիւնը, նորընծայ Տէր հօր առաջարկութեամբ կազմուեցաւ «Կարոցասիրաց» և ներկայից ընդհանուր որոշմամբ գործադիր ժողովոյ անգամ ընտրուեցան Տեաք Խ. Փ. (ատենապետ), Սիմէն Մէճէլեան (ատենադպիր), Յովհաննէս (նա-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԻՎ. ՎԱԶՈՎ  
ИДЕ ЛИ? (ԿՈՒԳԱՅ)

Ի՞նչ սեւ մառախուղ և ի՞նչ մթապատ մշուշ կուտակուած էր աչուն մը վէթրէնի (?) վրայ : Խոնաւ, մանրաչիթ անձրեւ մը անդադրում կը ցօղէր երկնքէն, ամպերը, պաղ շոգիի վերածուած՝ կը ճնշէին գիւղին ցած ու ու խոնարհ անակներուն վրայ :

Յեխոտ փողոցներու մէջ գոռում

(?) վէթրէնի գիւղը Սօֆիաի եւ Բազարճըզի մէջտեղն է, այս գիւղի աղջիկներուն գեղեցկութիւնը պուլկար ժողովրդական երգերու մէջ երգուած է :

գոռում, վրլուռ, աղմուկ եւ իրարանցում կը տիրէր : Նիհար ու վտիտ ձիերով լծուած բաց կառքեր, զինուորական մթերքներ բեռնած եզան սայլեր, կառապաններ, անասուններ գիւղային պանդոկին գիշերային լուսութիւնը կաղմկէին : Այս խառնիճազանձին մէջ, նորակոչ զինուորներ, ոմանք համազգեստով, ոմանք քիչս մուշտակներ հագած, ուրիշներ պատառատուն շորերը վերարկուի տեղ ուսերին շաղկած՝ արագաքայլ կանցնէին, կը ճեղքէին ամբողջ, մաշած տրեխներով, փամփուշաներու շարք մը գօտիներէն կախուած, ուսերին ծաղկեայ փունջերով զարդարուած հրացաններով, եւ զինուորական մախաղը կ'անակներն...

Նուրս ու փուք, ցելս մինչև ծոնկը, ձիւնախառն տիղմ, սոսկում. իսկ զուարթ զինուորները կերպն ու կերպն :

Ի՞նչետան մը գրան առջև համախմբուած են սպաներ ու ճամբորդ-

— Մայրի՛կ, եղբայրն է, գոչեց վարդայան, չէկ ու սիրունիկ աղջիկ մը :

— Եղբայր, ճչեց աղջկան քովը կեցող ութ տարեկան երեխայ մը և ձեռքերը զինուորներուն մեկնեց :

— Չաւա՛կս, զաւա՛կս, գոչեց արտասուածքով մայրը :

Իսկոյն զօրաց խիտ շարքերէն գուրս ելաւ սեւաչեւայ, առոյգ ու պնդակազմ քաջ մը, մօտեցաւ իր մօր, ձեռքը համբուեց և փոքրիկ սրտը ու եզբօրն ալ ճակատէն : Կուրծքին փունջ մը անցուց, ուրիշ մըն ալ ձախականջին, զոր գեղեցիկ օրօրոք մը իրեն տուաւ, ու ցատկեց թուա զինուորներուն հասնելու :

— Երթա՛ս բարով, գաւա՛կս, կը գոչէր մայրը :

— Սթօյա՛ն, կը կանչէր կէս մարած, օրօրոք :

Բայց այդ աղմուկի խառնափութութեան մէջ ձայներն ին կորսուեցաւ : Սթօյանը զինուորներու եւ

կորեան (գանձապահ) և Սրբա-
համ Գարալեան (հաւաքիչ) : Ան-
միջապէս հանգանակութեան ձեռ-
նարկուեցաւ և գոյացաւ հարիւր
ֆրանքի գումար մը, զոր Պուլկա-
րական ազգ. թղթատարութեան
քով գտնուած խնայողական սըն-
տուկին ի պահ գրուեցաւ : Եւ որ-
պէս զի մանկագարտէզի համար
գալիք պաշտօնեայի ամուսկան-
ներու վճարման մասին դժուար-
ութիւններ չի ծագին, որոշ-
ուեցաւ երկու ամիս շարունակել
գրամական հաւաքումը և յետ-
այնու մանկագարտէզի բացումը
կատարել : Վաղինակ հայրը կըր-
կին իօնեցաւ, քաջալերեց ներ-
կաներն ու գործադիր ժողովոյ
անդամները և ժողովը փակեց
պահպանելով : Ներկայք գոհ և
ուրախ սրտիւ մեկնեցան իրենց
տեղերը :

Տէր հայրը չի մոռցաւ նաեւ
հայ որբերը. ի նպատակ անոնց
հանգանակութիւն մը կատարեց :
Այս առթիւ մեր խորին շնոր-
հակալութիւններն ու խնդակ-
ցութիւններն կը յայտնեմք ար-
ժանագատիւ Տէր Վաղինակ հօր և
կը խնդրենք որ այսպէս ժամա-
նակ առ ժամանակ մեզ այցելէ
ու խրախուսէ :

Սէ ԱՅԲ

ՌՈՒՍԸ • ՀԱՅԵՐԸ ԵՒ ՄԱԿԵՒՈՒՄՅԻՒՒՄ

Այն հեռագիրը որ հաղորդեց Ձի-
նովիկի տեսակցութիւնը Համիտ
Սուլթանի հետ մեծ յողում է առջ
բերել թուրք ժողովրդի ամեն դա-
սակարգի և մամուլի մէջ. որովհե-
տեալ հեռագրի հաղորդածին համեմատ,
Ռուս զեպանը Համիտին առաջար-
կել է խիստ միջոցներ ձեռք առնել
մակեդոնական շարժումներին դէմ :
Բուլղար ժողովրդը Ռուս կառա-
վարութեան վրա շատ մեծ յոյսեր
ուներ, նա քաղաքաքան նրբութեան
ներքի և հախճարի մէջ թափանցել
անկարող լինելով, միշտ հաւատա-

զօրքն ալ մշուշին մէջ անյայտա-
ցաւ :

Մայրը միշտ հոն, հեռուն կը նա-
յէր, բայց ոչինչ կը տեսար : Օրիորդը
իր պէնագեղ գոգնոցին երանգաւոր
եղը վերցուց և երեսը ծածկեց :

Սթոյանի մայրը, երբ առն մտաւ
սկսաւ դառնապէս արտասուել : Հնա-
մաշ ու ճաթած սնտուկ մը բացաւ,
չապիկներու և պարեզոտներու ներ-
քեւէն պահուած մոմ մը առաւ ու
փակցուց պատկերին առջև ու ծըն-
րադրելով աղօթել սկսաւ :

Իսկ ճիշդ նոյն ժամուն Տրակո-
մանի մօտ թնդանութիւնը կը գո-
ռային :

1885 աւրուան նոյեմբեր շորսն
էր : ( )

( ) Պերլինի դաշնագիրը Սան-Սթէ-
ֆանօյի դաշնագիրը ջրելէն զատ
Պուլկարիան ալ ջրտուեց, և հարա-
ւային Պուլկարիան առանձին, ինք-

ցած էր որ իր զօրեղ եղբայրը գեո-
սարուկ մնացած թուրքներին էլ
պէտք է ոգնի թրքական անասնելի
լուծը որ առաջ խորտակուեալ հա-
մար : Եւ ահա յանկարծ ցարի Պօլսի
ներկայացուցիչը եկաւ թուրքար ժո-
ղովրդի երազները ու յոյսերը օգր
ցեղելու :

Թերեւս ոեւէ քաղաքական շա-
հից զրդուած Ձինովիկի այդ քայլը
արեց, գուցէ Մակեդոնիայի խնդրի
արծարծումը ներկայումս անյարմար
համարելով այդ միջոցով ուզեց յե-
զափոխականներին սահմել, կամ թէ
գիտեմա՞ր Սուլթանին զրդուեալ խիստ
միջոցների դիմել որպէս զի Մակե-
դոնական ապստամբութիւնը շուտով
պայթի :

Սրանք ամէնքը ենթադրութիւն-
ներ են, որոնք միայն ապագան կա-
րող է պարզել : Եւ զրա համար էլ
աւելորդ ենք համարում երկարուրա-
րակ բացատրութիւններ մէջ մտնել :
Մեզ համար միայն ցանկալին և
հաւատարմին այն է որ թէ թուրքար
ժողովուրդը և թէ մակեդոնացի յե-
զափոխական տարրը Ձինովիկի այդ
քայլից չեն սարսափի և նոյն և-
ռանդով կը շարունակեն Մակեդո-
նիայի ազատագրութեան գործը ի-
րենց ժողովրդին լրջօրէն պատրաս-
տելով զանուզան քաղաքական խո-
շոր ու ճակատագրական անակնկալ-
ներին դիմաւորելու համար :

Չարմանալին այն է որ Ձինովիկի
իր նոյն տեսակցութեան մէջ հայե-
րիս պաշտպանել է Սուլթանի մօտ,
մեր անասնելի վիճակը չեղեցիկով : Այս
մի քունի անգամ է որ Ռուսահայերը
խեղճորդ ցարի ներկայացուցիչը սաճ-
կահայի համար բարեխօսում է : ա-
ռաջի անգամները մեր հարցը մէջտեղ
գցելով մի քանի իւզոտ պատաստներ
կորցեց թուրքից, հիմա արդեօք ինչ
է ուզում : Արդեօք չը կասկածենք
որ Ձինովիկի Մակեդոնական շար-
ժումները ճնշել և հայերի վիճակը
բարւոքել պահանջելով Սուլթանին
հասկացնում է թէ պէտք է շարու-
նակել հայերին ջնջել :

Ռուսի մեզ բարի չը կանենալը մի
անժխտելի ճշմարտութիւն է. նա իր
Փոքր Ասիական քաղաքակնութեան
խնչնդոտ հանդիսացող տարր մեզ է
ճանաչում, իսկ Մակեդոնիայի դէմ

Այս գիշեր պառաւ էէնա երազ կը
տեսնար :

Մեծ ամպ մը, զինուորները ամպի
մէջ կերթային, Սթոյանն ալ հոն :
Սուրբ Աստուածամար Ինչ սոսկում,
նավար կառավարութեան մը վերած-
ուեցաւ Սրեւելիան Ռուսիլի անուետով,
որուն մայրաքաղաքն էր Ֆիլիպէ :
Պուլկար ազատութեան գործիչները,
որոնք գեո կենդանի էին, չէին կր-
նար հանդուրժել որ յեզափոխու-
թեան որրանը եղող Պուլկարիոյ էն
նուիրական մասը իր եղբայրներէն
զատուած կիսանկախ կեանք ունե-
նայ : 1885 սեպտեմբեր 6ին Ֆիլիպէի
մէջ յեզափոխութիւն մը եղաւ, և
թրակիան Պուլկարիոյ Ալէքսանդր
Պաթէպէրկ իշխանի գրոշին տակ
միայնա՞ծ հոչակեցին : Պաշտելի իշ-
խանը սիրով ընդունեց և Պալքա-
նէն սնցնելով Ֆիլիպէ կեաւ : Պուլ-
կարիոյ գրացիները այս միայնակ
խէթ սչքով նայեցան և Սերպիոյ
հանդուրեալ Միլան թագաւորը :

մի առանձին ատելութիւն չունի.
ուրեմն ինչ պատճառով այսօր նա մեզ
պաշտպան է համարանում և իր եղ-
բայրակիցները զսպելու համար խիստ
միջոցներ պահանջում : Չէ կրկին
սուր մի փորացաւ ունի կրկին
Սուլթանի գլխին մի «օյին» է ու-
զում խաղալ, ի հարկէ միայն իր շա-
հը աչքի առաջ ունենալով :

Ապրենք ու տեսնենք :
Վ.Ս.ՐԴՕ
Ռուսչուք, 15 փետր.

ՆԱՄՍԿ ԻՄՐԱՒՈՒՄԻՍՏՆ

Սովետանջ Հայաստանի բազմա-
չարչար կարօտելոց փոքրիկ նպաստ
մը բնուելու և միանգամայն քաղա-
քիս հայ ազգաբնակչութեան հայկա-
կան ներկայացումի մյ վայելքն
ըմբռնելու ապու կրկին նպատակով,
սուրինք ներկայացում մը յունուար
20ին, որուն արդիւնքը կը ներկա-
յացենք Շարժումի Պատ. Ընթեր-
ցողներուն :

Table with 2 columns: Name and Amount. Includes items like 'ՄՈՒՏԲ', '16 օրեակներէ', '10 թիկնաթու (ըստ կամա)', 'Ա. կարգի աթու 45 հատ', 'Բ. » » 48 »', 'Գ. » » 75 »', 'Դ. » » 50 »', 'Վերջէն աւելցուած աթուներէ', 'Նուէր Տ. Յակոբ Փափագեանէ', '» » ՈՄ', '» » Մ. Փ', '» » Կ. Պ.', '» » Վ. Մ.', '» » Ա. Պէնիանէ', 'ԵՑԵ.85'

Table with 2 columns: Name and Amount. Includes items like 'Յայտարարութեան և տոմ- սերու', '4երպովի մարդի', 'Պարան, մոմ, ժանեակ Տ. Յա- կոբանի և ուրիշներու ձեռքով', 'Թատրոնի վարձք', 'Փորձելու համար թատրոնին նուագառներու (ծախք և վարձք)', 'Դատարար և մուկիայի', 'Չգետի, գլխարկի համար ծախք', 'Կոտրածներու վաւս', 'Թատրոնական զգեստի ծախք', '24.50', '1.90', '14.95', '50.—', '20.—', '35.—', '8 —', '11.20', '3.—', '10.—'

ամպը կորոտայ, երկինքը կը գոռայ,
երկիրը կը շարժի, տես ինչ է ե-
ղեր կոխը : Սթոյան ամպերու մէջ
անհետացաւ, այլևս չկայ, ինչ ընե-
լու է հիմա : Մէկէն, զարնուածի

Պալքանեան թրակիզի քաղաքա-
կան հաւատարմութիւնը խաղ-
տած յայտարարելով 1885 նոյեմբեր
2ին Պուլկարիոյ սահմաններէն խու-
ժեց, և Չարիպրոտ, Թրքն, Տրա-
կոման, ու Քուլա Սերպ գինուորնե-
րէն զրաւեցան :

Իշխան Պաթէպէրկ Ֆիլիպէ էր,
առաւօտուն նոյեմբեր 2ին յայտա-
րարութեամբ մը ամբողջ ազգը զէնքի
հրաւիրեց, և իր բանակով ճամբայ
ելաւ կոռնի գաշտը : Պուլկար զի-
նուորները իբր սպասամբ գեո
թուրք սահմանագլուխ էին, մօտ
60—70 հազար : Սլիվիցիայի մօտ նո-
յեմբեր 7, 6, 7ին արիւնալի ճակա-
տամար մը տեղի ունեցաւ : Պուլկար
բռնակը իր քաջ ու անվախ իշխա-
նին զեկավարութեամբ փառաւոր

Պատրաստ դրամ 400.80
586.85

Պատրաստի գումարը 400.85 ար-
ժաթ լեվ ասկի դրամի վերածուելով,
Տիկին Տօքթ. Օրմանեանի ձեռքով
փետրուար 3ին զրկուեցաւ Ազգային
Պատրիարքարան ամենակարօտ գա-
ւառները զրկուելու համար :

Այս առթիւ կը փութանք մեր խո-
րին շնորհակալութիւնը յայտնելու
նախ քաղաքիս հայ հաւարակութեան,
որ փութաց իր ներկայութեամբը
խրախուսել մեզ մեր այս առաջին
ձեռնարկին մէջ և արդիւնաւոր դար-
ձունել զանի : Յետոյ Տիկին Գ. Տօք-
Օրմանեանի և Տիկին Մ. Սրոնք
ինքնաբերաբար յանձն առին ցրուել
թատրոնի առմերը : Օր. Չարուհի
Թաչճեանի և Օր. Պերճուհի Պար-
տիզեանի որոնցմէ առաջինը ներկա-
յացման և երկրորդը կենդանի պատ-
կերներու մասնակցելով ապահովե-
ցին ներկայացման ամբողջութիւնը :
Ինչպէս նաեւ «Վէլյո» խմբի անդամ
Տ. Յակոբեանի որ ներկայացման կա-
նոնաւորութեան աշխատելու, և
գիմնազիայի գծագրութեան ուսուցիչ
Տիար Սթանլէֆի որ սիրալոյսով
յանձն առաւ կազմել կենդանի պատ-
կերները :

Իսկ անոնց համար որոնք չեն բա-
ւականանար վերի հաշուեկոչով,
պատրաստ ենք տալ պէտք եղած բա-
ցատրութիւնները, և թէ երբեք հա-
ճին ուղղակի դիմել մեզի :

ՄԱՍՆԱՆՈՒՄ

Ֆիլիպէ, 15 Փետրուար

ՆԱՄՍԿ ԱՍՈՒՄ

Սեփաստացի Մաթէոս Համ-
բարձուեան, կոչկակար. — խրմ-
բագրութեանս քով նամակ մը
ուներ : Հաճեցէք գալ և ստա-
նալու :
— Եաշ Ե. Ք. Ն. — Ստացած
ենք զր'ած բաժնեգիրնիդ :

պէս արթնցաւ, ներսը սեւ ու մութ
խաւար էր : Միայն քամին դուրսը
կը ֆշար : Ան էր կոխը :

Տէր Յիսուս Գրիստոս պաշտպանէ
զինքը :

յաղթութիւն մը տարաւ, Սերպերը
մեծ կորուստներով հանանջել սկսան :
Նոյեմբեր 10ին Տրակոմանը առնուե-
ցաւ, 11ին Չարիպրոտը, և 13ին
Բիթոթը, սերպերը 15ին սկսան զէպի
նի : նահանջել, Աւսարիոյ միջամտու-
թեամբ թշնամական յարաբերու-
թիւնները զազարացան և յետոյ ալ
հաշտութիւն գոյացաւ : Այն տան
պուլկար նախարարացեալ Բէթքօ
Գարսովէլօն էր, Ներկայ տէմքրաթ-
ներու պետը և 1886ին զահընկից
ըրաւ Պուլկարիոյ էն պաշտելի մարզը :
Սուրանիլի նախագահ Ս. Սթամպո-
լովը (յետոյ նախարար) յաջողեցաւ
հակահարուածով մը իշխանը ըրել
տալ և զաւարիները մահով պատ-
ժել բայց իշխանը յօժար կամօք
հրաժարեցաւ պուլկար զահէն :

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ս

Սուլթանի նախարարական ժողովը իր վերջին նիստին մէջ զբաղուեց Էմաիլեան խնդրով, գլխաւոր ուշադրութիւնը դարձնելով խաղաղութիւնը հաստատ պահելու միջոցներու վրայ: Պատերազմական նախարարը ուշադրութիւն հրաւիրեց Էմաիլեան վերջին խնդրին յիշատակելով, որ կը վերաբերին լիբանանի զօրքերու Էմաիլեան և Քէսուսէն-տիլի մէջ լսուող կեդրոնացումները: — Եզրայտուի Խալիլի քարտուղար Ահմէտ Վէֆիկ պէյի, որ այժմ Պոլիս կը գտնուի, արտօնուած է ջանալ վերջ գնել Սուլթանի և Խալիլի լարուած յարաբերութիւններուն և հող պատրաստել Սուլթանին Խալիլի կողմէ տրուելիք այցելութեան մը:

Թ Ո Ւ Ս Ի Ս

Ռուսական թերթերը սկսած են խիստ լեզու գործածել Մակեդոնական Բարձր Կոմիտէի դէմ: Անցեալ օրերը Ռուսիոյ կրթական նախարարին վրայ ատրճանակ պարպեր են և վիրաւորեր են: Կրթական նախարարի կեանքին դէմ փորձ ընող Գորբովիչ առաջ Մոսկուայի համալսարանի ընդհատական բաժնի ուսանող եղած է. 1896ին արտաքսուած է ուսանողական խումբով ինքնուրու մասնակցած ըլլալուն համար: 1898ին Գորբովիչ իրաւունք ստացած է Դորպատի մէջ բըժշկութիւն սորուիլ, ուրկէ կըրկին արտաքսուած է 1899ին նորէն ուսանողական խումբով ինքնուրու մասնակցելու պատճառով:

Սո՛ւրբ Ստուածամար, խղճա՛ որդրո՛ւք՝ Սթօյանիս: Մինչեւ լոյս չի կրցաւ քնանալ, — Խնամի Բէթթէ, ամպը ի՞նչ կը ցուցնէ, առտուն հարցուց: — Ամպը երկու տեսակ է: Ի՞նչ պիտի ամպ երազած ես: Պատմեց իր երազը, Խնամի Բէթթէն մտածեց, Ինք այդ տեսակ ամպ իր երազահանին մէջ չէր յիշեր, բայց երբ որ Յէնայի սարսափած երեսը դիտեց, որ հեւալով իրեն կը նայէր, գուրթը շարժելով ըսաւ: — Հոգ մի՛ ընէր, Յէնօ, երազդ բարի է: Ամպը լուր ալ կը ցուցնէ, Սթօյանէն Նամակ պիտի առնես: Պառաւին երեսը այս յուսատու մեկնութենէն ուրախացաւ: — Կեց օր ետքը, գերի բռնուած սերպ զինուորները տանող կամաւորէ մը, որ Սթօյանին ընկերն էր, նամակ մը առաւ: Նամակը Սթօյանէն էր, շուտ մը վազեց սէրտէրին կարնացնել տալու:

Վերջին տարին Գորբովիչ Պերլինի համալսարանի մէջ կուսանէր: Թ Ր Ա Ն Ս Վ Ա Լ

Ըստ Լօնտոնի հեռագիրներուն ժէնէրայ Պօթա անձնատուր եղեր է Քիշնբրի. սակայն այդ լուրը պաշտօնապէս հաստատուած չէ: Այժմ ալ կը հաւատայ թէ Պօթան կրնայ անձնատուր ըլլալ. մանաւանդ օտարները:

— Քէթթաունէն կը հեռագրեն որ անձրեւներու պատճառով ձմրէնչի պատերազմական գործողութիւնները ուշացած են: Անոր դէմ կեդրոնացած պօէրները փոքրիկ ջոկատներ թափուած են. ժէնէրայ Տուէտ չի կրնալով գետը Քէթթաունի հիւսիսային կողմէն անցնիլ դէպի հարաւ գացեր է: Զօրքերը երկաթուղիի դժին քովէն անցեր են, մօտեցեր են Փիթրուս Վիլին, բայց անգլիացիներէ ետ մղուեր են: Ուրիշ հեռագիր մը կըսէ թէ ժէնէրայ Տուէտ գացեր է Փիլիպպոսանի դէմ. Շթէյն և ժէնէրայ Հերձօգ անոր հետը են եղեր: Ամէն օր պօէրները պերի կը բռնուին, կամ թէ իրենք անձնատուր կըլլան: Գերիները կը պատմեն թէ պօէրները շատ յուսահատուած են:

— Անգլիոյ պատերազմական նախարարութիւնը երեսփոխանական ժողովին ներկայացուցեց է յաւելուածական պիւտճէ մը թրանսպարտ պատերազմի համար. գումարը 75 միլիօն ֆրանք է, որուն 50ը նորոգութիւններու համար է, 25ը ռազմամթերքի: Այս հաշիւը ապագայ ծախքերու մասին չէ, այլ անցեալի:

Չ Ի Ն Ա Ս Ս Ա Ն Անգլիական թերթ մը հաստատապէս կը հաղորդէ որ իշխան Թուան և Չանկ, գուրս Լուն և

Սթօյան կը գրէր: «Մայր, այս նամակը կը գրեմ, ըսելու համար որ ողջ առողջ եմ, եւ սերպերուն ալ յաղթած ենք, կեցցէ՛ Պուլկարիան: Ես ողջ եմ, Բանկիլին ալ, հօրեղբորս տղան ալ ողջ է, եւ մօրը կը բարեւէ: Սերպերը շատ գնտակ ու թնդանօթ կը նետեն, բայց մեր ռախներէն ալ կը վախնան: Մեր իշխանը ճշմարիտ առիւծ մըն է. կոռիին ատեն մեր գունտին առաջն էր, եւ մեզի «յառաջ սիրելի եղբայրներ» կը գոչէր: Չի մոռնաք, Յմէթանին մօտ ձգած փոկս վերցնելու: Վաղը Տրակոմանին կիրճերէն թշնամին պիտի հալածենք: Վերադարձիս, նիշէն նուէր մը պիտի բերեմ Ձիւնին, քեզի ալ լէվ մը կուղարկեմ որ ծախես, Բատուլչօին ալ պիտի սորվեցնեմ թէ ուսմբերը ինչպէ՞ս կը սուլեն: Չեւքը կը համբուրեմ քու հնազանդ տղաք»:

Յ. Գ. — «Հօրեղբորս Բէթթէին շատ բարեւ, սերպական հրացան մը անոր պիտի դրկեմ: Մայրիկ, Սթօյան քային ալ շատ շատ բարեւներ, անոր նուիրած փունջը դեռ չեմ կորսնցուցած»:

Նոյն Պառաւ Յէնայի տխրամած սիրտը զուարթացաւ, շուտով վազեց, իր ծերացած ոսկորներով Սթօյան քային տունը, Հոն ուրախութիւնը մեծ էր: Փողոց ելլելուն պէս, պառաւ Յէնան, նոր կալանաւորներու խումբեր տեսաւ, որոնց ետեւը պուլկար զինուոր մը կանգնած էր: Իրեն այնպէս թուեցաւ, թէ նոյնինքն իր Սթօյանն է, որովհետեւ շատ կը նմանէր: Չէ, ան չէր, Նաչեցաւ, ուղեց հարցնելու, գուցէ լուր մը կուտար իր տղային, բայց խեղճ կալանաւորները իր ուշադրութիւնը խլեցին: — Աստուած իմ մոլտաց, ասո՞նք են սերպերը, Բարի մարդիկ կերեւան... թշուառ մայրերը... գիտե՛ն արդեօք: — Էյ տղաքներս,

Արօյսև-Տօյրեկ

ժէնէրայ Շուկ, Փու Սպանկ փախած են: — Թիէնձիւնէն կը հաղորդեն թէ Գերմանիա Լի Հունկ Չանկի միջոցաւ Չինաստանի յայտարարած է որ իրաւունք չունի ու է պետութեան մը հետ մասնաւոր դաշնագրութիւններ կնքել, մինչեւ որ բոլոր պետութիւններու գլխաց ստանձնած պարտականութիւնները չը կատարէ:

— Պրանսական զինուորներէն 10,000 հոգի մարտ ամսին Պրանսա պիտի վերադառնան: — «Թայմզ»-ի Բէթթիի թղթակիցը կը հաղորդէ որ Ռուսիա խիստ ճնշում կը բանեցնէ Լի Հունկ Չանկի վրայ. Մանչուրիոյ խնդրոյն մասին վերջնական որոշում մը տալու համար:

Չինական թերթերը պաշտօնեաներու նոր ցանկ մը հրատարակած են, որոնց համար խիստ պատիժ պահանջուած է եւրոպացիներու կողմէն:

Յ Ո Ւ Ն Ա Ս Ս Ա Ն

50 տարի առաջ Հնդկաստանի մէջ մինաճ Մուճաճ օչու անուն յոյն մը կտակով փախաք յայտներ է որ իր թողուցած դրամը Անգլիական պետական դրամատունը պահուի և 50 տարի վերջը յանձնուի իր ժառանգորդներուն: Այդ պայմանաւճառը լրացած և գրամը 44,800,000 անգլիական ոսկի եղած է: Բնականաբար ասանկ զուճարի մը շատեր ժառանգորդ պիտի ուզեն ձեւանալ և Փիլիպպէն կարգ մը անձեր ինքզինքնին ժառանգորդ ներկայացուցեր են: Յունական թերթերը կը հրաւիրեն իրենց կաւաճարութիւնը որպէս զի հեռացնէ կեղծ ժառանգորդները և տիրանայ այս գումարին որով երկիրը իր դրամական տագնապէն կարելի պիտի ըլլայ ազատել:

Յ. Գ. — «Հօրեղբորս Բէթթէին շատ բարեւ, սերպական հրացան մը անոր պիտի դրկեմ: Մայրիկ, Սթօյան քային ալ շատ շատ բարեւներ, անոր նուիրած փունջը դեռ չեմ կորսնցուցած»:

Նոյն Պառաւ Յէնայի տխրամած սիրտը զուարթացաւ, շուտով վազեց, իր ծերացած ոսկորներով Սթօյան քային տունը, Հոն ուրախութիւնը մեծ էր: Փողոց ելլելուն պէս, պառաւ Յէնան, նոր կալանաւորներու խումբեր տեսաւ, որոնց ետեւը պուլկար զինուոր մը կանգնած էր: Իրեն այնպէս թուեցաւ, թէ նոյնինքն իր Սթօյանն է, որովհետեւ շատ կը նմանէր: Չէ, ան չէր, Նաչեցաւ, ուղեց հարցնելու, գուցէ լուր մը կուտար իր տղային, բայց խեղճ կալանաւորները իր ուշադրութիւնը խլեցին: — Աստուած իմ մոլտաց, ասո՞նք են սերպերը, Բարի մարդիկ կերեւան... թշուառ մայրերը... գիտե՛ն արդեօք: — Էյ տղաքներս,

Պ Ո Ւ Լ Կ Ա Ր Ի Ս

Ժամանակաւոր կառավարութեան հրաժարականը ընդունող ելով նախարարութիւնը կազմուած է Բ. Գարալէլովի նախագահութեամբ հետեւեալ կերպով: Ինք Պ. Գարալէլով նախարարակետ և ելեւմտից նախարար: Պ. Տանէվ արտաքին գործոց: Պ. Միխայիլ Սարաֆով ներքին գործոց: Պ. Ի. Սլավէյքով կըրթական: Տօթթ, Բատէվ դատական: Ժէնէրայ Փափրիքով պատերազմական: Ա. Լիւցկանով երկրագործութեան և վստառականութեան: Պ. Ի. Պէլինով հանրային շինութեանց և հաղորդակցութեանց:

— Փետրուար 19ին ամբողջ Պուլկարիան շքեղ կերպով և մեծ ոգեւորութեամբ տօնեց Պուլկարիոյ ազատութեան տարեդարձը: Վառնայի մէջ եւս մեծ ոգեւորութեամբ կատարուեցաւ այդ մեծ տօնը. բոլոր մակեդոնացիները և հրացանաձիգ ընկերութեան անդամները մասնակցեցան: Վառնայի Մակեդոնական մասնաճակի նախագահ Տօթթ. Շումքով ոգեւորուած ճառ մը սրտառանց Մակեդոնական խնդրոյն մասին. անոր ճառի գլխաւոր միտքը այն էր թէ՛ սարուկի ազատութեան միակ միջոցը զէնքով ապստամբիլն է. և քաղաքագէտներու էնթրիզները ու սպանալիքները պէտք չէ որ աղքատ ազատութեան ծարաւի և ապստամբ ժողովրդի մը վրայ:

Ի Լ Ն Ր Ա Ս Ո Ւ Ի Ս  
Չորրորդ թիւը № 218 Սպարնա փողոցի հիւգերորդ անկիւնը 250 քառակուսի կանքուն պարսպ գետին, կամ տունով միասին: Փափաքողք թող դիմեն՝ Միլիթս շուճի Իվանովս:

Отговорникъ:  
Д-ръ МѢГХРДИЧЪ ВАРТАНЪ  
Печ. «Взаимность» — Варна.

պատեցէք մի քիչ. եւ շուտ մը ներս վազելով, ձեռքը օղիի շիշ մը բռնած դուրս ելաւ. ու կանչեց սերպ զինուորները օղի հրամցնելու: Կալանաւորները հսկող պուլկար զինուորը, բարեստութեամբ ժպտալով, կանգնեցուց զանոնք:

— Փախիմ, Փախիմ, յոգնած-դաղրած կալանաւորները երախտագիտութեամբ կը պատասխանէին, կենսատու օղիէն տաքցած:

— Կաթիլ մըն ալ ինձի միաց. կենաց պատու, ուրախութեամբ դոչեց պուլկար զինուորը, եւ գլորեց շիշին մէջ մնացած վերջին կաթիլն ալ:

— Բոլորն ալ Աստուծոյ քրիստոնեաները... բայց ինչո՞ւ կուտեսցան... ա՛խ մայրերս... պառաւ Յէնան զարմանալով կը նայէր մեկնող կալանաւորներու խմբին ետեւէն:

Թարգմ. Գ. Ս.  
(Շարունակելի)